



Burbank Unified School District  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4451

**Board of Education**

Steve Ferguson, President  
Dr. Emily Weisberg, Vice President  
Dr. Armond Aghakhanian, Clerk  
Abby Pontzer Kamkar  
Charlene Tabet

**Acting Superintendent**

John Paramo, Ed. D.

Հունիսի 20, 2023

Բրբենքի հարգելի համայնք,

Այստեղ նկարագրված է հաշվապահական սխալի նկարագիրը, որը ներկայացվել էր կրթական խորհրդին 2023 թվականի հունիսի 15-ին:

**1. Ի՞նչ ազդեցություն ունեցավ հաշվապահական այդ սխալը:**

Այդ սխալի պատճառով, Բրբենքի ԴՄՇ-ը կավարտի ֆինանսական տարին \$11 միլիոն դոլար ավելի դրամով, քանի որ բյուջետավորվել էր ուսումնական տարվա ընթացքում:

**2. Ո՞րն է հաջորդ քայլը:**

Դպրոցական շրջանը գտավ սխալը, կատարեց հաշվապահական ճիշտ հաշվարկ և համապատասխանաբար թարմացրեց իր բյուջեն: 2023 թվականի հունիսի 22-ին կրթական խորհրդի գումարած հատուկ ժողովի ընթացքում, այն նոր բյուջե մշակեց ֆինանսական նոր տարվա համար (հուլիսի 1, 2023- հունիսի 30, 2024), որը ներառեց այս ուղղումները:

**3. Ինչպե՞ս եք նախատեսում ուղղել սխալն ապագայում: Հետաքննություն սկսվե՞լ է:**

Շրջանի ղեկավարությունը վերանայում է բյուջետային բոլոր ընթացակարգերն ու օրենքները՝ լավագույն փորձն ապահովելու համար: Անմիջապես ուժի մեջ են մտնելու ընթացակարգային քայլեր, որոնք կավարտվեն փաստաթղթերի անձամբ ստորագրությամբ (թանաքով ստորագրություն թղթի վրա և ոչ թե համակարգչային եղանակով) և համապատասխան վերահսկողի կողմից վավերացմամբ:

Առաջիկա շաբաթների ընթացքում, շրջանի ղեկավարությունը կվերնայի ֆինանսական բոլոր ընթացակարգերը և օրենքներն՝ արտաքին կազմակերպության օգնությամբ ամենալավ փորձառությունն ունենալու և ձեռքով գրառումներ կատարելու համար տրամադրված աշխատանքային ժամերի կրճատման համար, որոնք անհրաժեշտ են բյուջեն կազմելու և թարմացնելու համար:

**4. Ե՞րբ է կատարվելու հաջորդ թարմացումը:**

Կրթական խորհուրդն ու համայնքը կստանան բյուջեի և ֆինանսների գրասենյակի թարմացումները կրթական խորհրդի հերթական ժողովի ընթացքում, որը կկայանա 2023 թվականի հուլիսի 20-ին:

**5. Արդյո՞ք սա պարզապես թղթի վրա կատարված սխալ էր և ամեն ինչ տեղը տեղին է՞: Կա՞ն արդյոք լուրջ հետևանքներ, որոնք կազդեն մեր դպրոցների և աշակերտների վրա:**

Սա թղթի վրա կատարված սխալ էր, որը քայքայեց ժողովրդի վստահությունը մեր ֆինանսական հաշվետվությունների ճշգրտության նկատմամբ: Այնուամենայնիվ, քանի որ սխալը կայանում էր նրանում, որ այն գումարի չափը, որոտվ մենք կանխատեսում էինք ավարտել ֆինանսական տարին, իրականում շրջանին հնարավորություն կտա ավելի շատ ներդրումներ կատարել մեր դպրոցներին և աշակերտներին համար:

**6. Ո՞րն է գործող և ժամանակավոր գերատեսուչների միջև ընկած տարբերությունը:**

Գործող գերատեսուչը հաճախ այն կոչումն է, որը տրվում է, երբ մշտական գերատեսուչը արձակուրդում է կամ էլ այլ կերպ չի կարողանում կատարել իր պարտականությունները կամ աշխատանքից ազատվել է: Պարզ ասած, երբ 2023 թվականի հունիսի 7-ին դոկտոր Հիլլին հարկադրեցին արձակուրդ գնալ, դպրոցական շրջանին հարկավոր էր ինչ-որ մեկը գլխավոր ադմինիստրատորի դեր կատարելու համար:

Ժամանակավոր գերատեսչի պաշտոնը պահանջում է կրթական խորհրդի պաշտոնական հրամանը որևէ մեկին նշանակելու համար, որը ժամանակավորապես կզբաղեցնի գերատեսուչի պաշտոնը, մինչև կրթական խորհուրդը կգնահատի շրջանի կարիքներն ու կիրականացնի գերատեսչի երկարաժամկետ իրավահաջորդի հավաքագրման գործընթացը: